ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ընդունեցեք ինձնից ողջույն և հաղորդակցումն ուրախության ի Տերն մեր Հիսուս, որ իր ծննդյամբ բերել է աշխարհին խաղաղություն և մարդկանց երջանկություն, որը ավետեցին հրեշտակները, ինչպես և կյանք, որը բարբառել է Նա ինքը՝ «Ես եմ յարութիւն և կեանք»:

Թող նրա շնորհաբաշխ կյանքը հաստատուն պահի մեր բոլորի՝ Աստվածորդու մարմնավորման մեծ տոնը տոնողներիս հավասար և թող Նա իր բարձրագույն ուժով պահպանի և ամրացնի մեր երկրային կյանքը և հավելու այլ օգտակար, բարի և փրկարար գործեր:

Բեթղեհեմում ծնվածը և մսուրում հանգչողը թող ընդունի մեզ՝ իր նվաստ երկրապագողներին և պարգևի շնորհք՝ իրեն փառաբանելու և ուրախանալու համար:

Եվ թող վերահաս նոր տարին բոլոր ժողովուրդների համար լինի բարեբար խաղաղության տարի, աստվածային շնորհքը բոլոր երկնային օգնությունը խնդրողների վրա լինելու և Տիրոջը փառաբանելու տարի:

Եղբայրական սիրով առ Զերդ Սրբությունն ի Քրիստոս,

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

Ա Լ Ե Ք Ս Ի

ԹԲԻԼԻՍԻՑ

Վերահաս ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ մատուցանում եմ Զերդ Վեհափառությանը մեր շնորհավորանքը: Թող Բեթղեհեմում ծնված մեր Փրկիչը պարգևի Զերդ Վեհափառությանը առողջություն և երկարատև կյանք: Թող այս նոր տարում աշխարհի վրա մարմնավորվի հրեշտակների ազդարարած աստվածային պատգամը՝ «և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ձեր եղբայրն ի Քրիստոս,

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խնդրում եմ Ձեզ ընդունել մեր խորը և սրտագին շնորհավորանքները Քրիստոսի՝ մեր Աստուծո Ծննդյան մեծ տոնի առթիվ, որը բերել է «խաղաղութիւն հեռաւորաց և մերձաւորաց» (Եսայի, Մէ 19): Ողջունում եմ Ձեզ նույնպես նոր տարվա առթիվ:

Ամբողջ հոգով ցանկանում եմ Ձերդ Սրբությանը երկար կյանք: «Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ., ԺԵ 13):

Որդիական նվիրական սիրով,

ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ՝

ՆԻԿՈԼԱՅ

ՏԱԼԼԻՆԻՑ

Եղբայրական սիրով ի սրտե հղում եմ Ձերդ Վեհափառությանը և Ձեր կողմից գլխավորված Հայ Եկեղեցուն լավագույն ցանկություններս՝ Քրիստոսի լուսապայծառ Ծննդյան տոնի և նոր տարվա առթիվ: Թող օրհնվի այս նոր տարում Ձեր գործունեությունը ընդհանուր խաղաղության, մեր եղբայրական եկեղեցիների, ժողովուրդների և սովետական ժողովուրդների բարգավաճման համար մղված պայքարում:

ԷՍՏՈՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ

ՐԻԳԱՅԻՑ

Սրտանց և աղոթքներով շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության նոր՝ 1954 տարին և Քրիստոսի լուսապայծառ Ծնունդը Բեթղեհեմի մսուրում: Հրեշտակները օրհներգով մեծարել են մանուկ Քրիստոսին՝ աշխարհի բարեգործին: Թող ամրանա բոլոր քրիստոնյաների միությունը: Թող ծաղկի ժողովուրդների բարեկամությունը՝ Բալթիկ ծովից մինչև աստվածաշնչային Արարատ լեռը և ողջ աշխարհում:

ԼԱՏՎԻԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ՝

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԼՈՆԴՈՆԻՑ

Սիրելի՛ եղբա՛յր ի Քրիստոս,

Շնորհք և խաղաղություն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ:

«Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհեմ, և տեսցուք զինչ է բանս այս, որ եղև, զոր Տէր եցոյց մեզ» (Ղուկ., Բ 15): Հասարակ հովիվների հետ, յուրաքանչյուր քրիստոնյա հոգի, Տիրոջ Ծննդյան տարեկան տոնախմբության առթիվ, քայլում է այն ճանապարհով, որ առաջնորդում է դեպի «մանուկն եդեալ ի մսուր»: Միատեղ կատարելով այս, քրիստոնյաները, մեծապես տարբերվող ավանդություններով, ցուցաբերում են աշխարհին իրենց էական միությունը՝ նվիրմամբ Հիսուս Քրիստոսին, որ «յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով» (Նիկիական հանգանակ):

Հովիվները ուղևորվեցին դեպի գոմը, որովհետև նրանք տեսան մի մեծ լույս, «և փառք Տեառն ծագեցին առ նոսա», և որովհետև նրանք լսեցին հրեշտակի պատգամը: Ինչքա՞ն կենսականորեն այս լույսը անհրաժեշտ է այսօրվա աշխարհին, որտեղ անվստահությունն ու կասկածը մթագնում են մարդկանց խորհուրդները և ստվեր են գցում աշխարհի ժողովուրդների վրա:

Քրիստոսի փրկելու և բժշկելու իշխանության վկայությամբ, միության խորը զգացմունքով է, որ ես շնորհավորում եմ Ձեզ, Սիրեցյալ Եղբա՛յր, մեր Փրկչի Ծննդյան տարեդարձի առթիվ: Աղոթենք, որ աստվածային իշխանությունը, որ գալիս է իր մոր բազուկների մեջ գտնվող այդ մանուկից, հաղթանակի խավարի, ատելության և հարստահարության ուժերին:

Աղոթում ենք Ձերդ Սրբության և Ձեր հավատացյալ ժողովրդի համար, Ձեզ և նրանց ցանկանալով օրհնյալ Ծնունդ:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈՅ՝

ՋԵՈՖՖՐԻ

ՍՈՖԻԱՅԻՑ

Եղբայրական սիրով շնորհավորում եմ Ձերդ Վեհափառությանը՝ Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ և Ձեր հոտին երջանիկ նոր տարի, խաղաղություն ամբողջ աշխարհում:

ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԿԻՐԻԼ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Ի բոլոր սրտե շնորհակալություն՝ անթելով նոր տարվա և Ծննդյան մեծ տոների առթիվ Ձերդ Վեհափառության արտահայտած բարի ցանկություններին համար: Խնդրում եմ նմանապես հաճեցեք ընդունել մեր մաղթանքները և եղբայրական ողջույնները Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնի առթիվ:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ՀՈՒՍՏԻՆԻԱՆ

ՋԱԳՈՐՍԿԻՑ

Մոսկվայի Հոգևոր ճեմարանը շնորհավորում է Ձերդ Վեհափառությանը՝ ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ: Ի սրտե ցանկանում ենք Ձեզ առողջություն, երկարատև կյանք և ամեն տեսակի բարօրություն:

Ռեկտոր՝ ավագ քահանա ՌՈՒԺԻՑԿԻՑ
Տեսուչ՝ պրոֆեսոր ԴՈԿՏՈՒՍՈՎ